

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՐՄԵՆ ՍԼԱՎԻԿԻ ԸՌՔՈՅԱՆԻ «ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Բանկային գործունեության հիմնական ուղղություններից մեկը վարկավորումն է, որը բանկերի համար լինելով առավել շահութաբեր, միևնույն ժամանակ, հանդիսանում է նաև բավականաչափ ռիսկային գործունեություն: Այդ առումով, առևտրային բանկերի արդյունավետ գործունեության կարևոր նախապայմաններից մեկն է վարկային ռիսկերի կառավարումը, ինչը, նախ և առաջ, ենթադրում է դրա հետ կապված գործընթացի տեսական հիմքերի և սոցիալ-տնտեսական բովանդակության համակողմանի ուսումնասիրություն: Ռիսկայնության բարձր մակարդակի դեպքում առևտրային բանկերը վարկավորման նկատմամբ, որպես կանոն, կանգնում են երկընտրանքի առջև, կապված հատկացված միջոցների վերադարձման երաշխիքների հետ: Այս տեսանկյունից, վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ վարկային ռիսկի կառավարումը ստանում է սկզբունքային նշանակություն:

Գրախոսվող աշխատանքում իրականացված հետազոտությունները նվիրված են վարկային ռիսկի կառավարման հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց լուծմանն ուղղված նոր մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի **արդիականությունը և հրատապությունը**:

Ատենախոսության **կառուցվածքը** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության

հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի **ներածական մասում** դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ներկայացված են տեսական, մեթոդական ու գործնական այն ուղղությունները, որոնք հանդիսացել են հեղինակի մշակումների և եզրահանգումների հիմք:

Ատենախոսության **առաջին**՝ **«Առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման տեսական և կիրառական սահմանները»** գլխում ուսումնասիրվել են առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման էությունը, տեսական շրջանակները, այդ խնդրի լուծմանն ուղղված մեթոդական մոտեցումները և գնահատվել է վարկային ռիսկի կառավարման կարևորությունն առևտրային բանկերի համար:

Աշխատանքի **երկրորդ**՝ **«Վարկային ռիսկի կառավարման տեխնիկան և գործընթացը»** գլխում ներկայացվել են վարկային ռիսկի կառավարման մեթոդաբանությունը և օգտագործվող մոդելները, դրանց առավելությունները և թերությունները:

Ատենախոսության **երրորդ**՝ **«Վարկային ռիսկի կառավարումը ձեռք բերված արդյունքների հիման վրա»** գլխում ներկայացվել են իրականացված հետազոտության արդյունքները, առաջարկվել են ՀՀ առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման բարելավմանն ուղղված մոտեցումներ:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ **հիմնավորվածություն և հավաստիություն:**

առկա խնդիրները, առաջարկվել է վարկային ռիսկի գնահատման և կառավարման գործիքակազմում կիրառել արհեստական բանականության սկզբունքները, հիմնավորվել է այդպիսի գործիքակազմի օգտագործման դեպքում վարկային ռիսկի գնահատման տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառության կարևորությունը, մշակվել և կառուցվել է կրիպտոարժույթային վարկային ռիսկի արդյունավետ կառավարման մոդել:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքներն ընձեռում են հնարավորություն կողմնորոշվել վարկային ռիսկի կառավարման արդիականացման ուղղությունների բացահայտման և դրանց կատարելագործման հարցում:

Ատենախոսության **գիտագործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան **դիտողություններ**, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայի շուրջ ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները.

1. Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների արդյունքում հեղինակը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ առևտրային բանկերում օգտագործվող տեխնիկական միջոցների օգտագործմամբ հնարավոր չէ ստանալ առավելագույն տեղեկատվություն պարտապանի վերաբերյալ: Այդ նպատակով առաջարկվում է մշակել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան լուծել վարկային ռիսկի գնահատման և կառավարման գործընթացում առկա խնդիրները: Կարծում ենք, հեղինակը պետք է առավել խորությամբ ներկայացներ նաև այդ մեխանիզմներն ու դրանց արդյունավետ գործունեության պայմանները՝ ՀՀ սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների պայմաններում:

նաև այդ մեխանիզմներն ու դրանց արդյունավետ գործունեության պայմանները՝
<< սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների պայմաններում:

2. Աշխատանքի տարբեր հատվածներում հեղինակն օգտագործում է <<վարկային ռիսկի կառավարման արդյունավետություն>> ձևակերպումը: Կարծում ենք, նման ձևակերպումը բավականաչափ մեկնաբանելի է և, այդ տեսանկյունից, առավել ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ էր ներկայացնել դրա տնտեսական բովանդակությունն ու գնահատման չափորոշիչները:

3. Վարկային ռիսկերի դրսևորման ձևերը և եղանակները տնտեսական գործունեության տարբեր տեսակների, տնտեսավարող սուբյեկտների և վարկային ծառայություններից օգտվող այլ հաճախորդների գծով տարբեր է: Այդ առումով, հեղինակն իր վերլուծությունների արդյունքում, մեր կարծիքով, պետք է դիտարկեր նաև վարկային ռիսկերի կառավարման տարբերակված մոտեցումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արժանիքները: Դրանք հետապնդում են հանրապետությունում վարկային ռիսկի կառավարման կատարելագործմանը նվիրված հետազոտումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Ա. Ըռոքյանի թեկնածուական ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

<Եղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և

կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել վարկային ռիսկի կառավարման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Ա. Ըոռքյանի «Վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
02.05.2022թ.



Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ
բ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար



Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

02.05.2022թ.